901 Գողգոթա, Գողգոթա, Գողգոթա...

1. Գողգոթա, Գողգոթա, Գողգոթա...
Արցունքի միջից նայում եմ
Խաչված Հիսուսին, իմ Փրկչին.
Ցավերս վերցրեց, մեղքից ազատեց,
Թեև գամված էր Նա խաչին:

Այդ մեխերը չեն գամել Քեզ բիրտ խաչին,
Եվ մարդիկ չեն ցավ պատճառել Քեզ, իմ Տե՛ր,
Քեզ գամել է անարգ խաչին մեղքը իմ,
Տառապանքիդ լուռ վկան է խաչը հին:

2. Տեսնում եմ Քեզ՝ խաչին գամված,
Փշե արյունոտ պսակով.
Գամվեցիր խաչին, արյուն թափեցիր,
Որ ազատես ինձ կորստից:

3. Տեսնում եմ հեռվում Գողգոթան,
Աստծո Գառնուկին՝ խաչի վրա.
Մեղքերս ներեց, մահից ազատեց,
Թեև գամված էր Նա խաչին:
Գողգոթա, Գողգոթա, Գողգոթա: